ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՌՆԱԿՑՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ: ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ *

ՀՏԴ 94/479.25/ *DOI: 10.52063/25792652-2024.1.20-20*

ԱՐՄԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
armine.arustamyan@mail.ru
ORCID: 0009-0008-7031-428X

Հոդվածի նպատակն է ներկայացնել 1921 թ. հուլիսի 5-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության (ՌԿ/բ/Կ) Կովկասյան բյուրոյի (Կովբյուրո) տխրահռչակ որոշումը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմ մտցնելու վերաբերյալ և փաստերի քննությամբ ցույց տալ այդ որոշման ապօրինի լինելը:

Ուսումնասիրությունն իրականացվել է հետևյալ խնդիրների առաջադրմամբ՝ 1. ցույց տալ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականություն որդեգրած և շարունակական դարձրած Խորհրդային Ադրբեջանի ռազմավարությունը, 2. բացահայտել Խորհրդային Ադրբեջանի դիվանագիտական քայլերը Լեռնային Ղարաբաղն աստիճանաբար բռնակցելու ուղղությամբ, 3. ներկայացնել Խորհրդային Հայաստանի կառավարության որոշումները Լեռնային Ղարաբաղը հայկական պետությանը կցելու ուղղությամբ, 4. նարիմանովյան քաղաքականության վերծանումը՝ որպես Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի շահերի համընկնումից օգտվելու, սպառնալիքների մարտավարությամբ նպատակին հասնելու քաղաքական ուղղություն, 5. ՌԿ/բ/Կ Կովբյուրոյի հուլիսի 4-ի հայանպաստ որոշումից հետ նահանջելու պատճառները, 6. Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանին բռնակցման փաստը ադրբեջանական պատմագիտության խեղաթյուրումների համապատկերում դիտարկելը:

Հետազոտությունն իրականացվել է սկզբնաղբյուրների համալիր քննության, պատմական տեսակետների համադրման, պատմաքննական մեթոդով: Հետազոտության առանցքում Լեռնային Ղարաբաղի բռնակցման հիմնախնդրի ուսումնասիրությունն է ադրբեջանական պատմագիտության խեղաթյուրումների համապատկերում:

Հետազոտության ընթացքում հանգել եմ հետևյալ եզրահանգումներին. 1. Խորհրդային Ադրբեջանը որդեգրել էր Թուրքիայի հետապնդած պանթուրքիզմի քաղաքականությունը, որի անկյունաքարերից մեկն էլ

* Հոդվածը ներկայացվել է 23.03.2024թ., գրախոսվել՝ 28.03.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

Լեռնային Ղարաբաղի կլանումն էր, 2. Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին տեղի ունեցավ Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի շահերի մեկտեղման արդյունքում, որի գլխավոր զարկերակը Քեմալական Թուրքիայի տարածաշրջանում հետապնդած հեռագնա նպատակներն էին, 3. ադրբեջանական պատմագիտությունը քննության ենթակա հարցի առնչությամբ արտահայտում է հակասական տեսակետներ, կատարում պատմական փաստերի բացահայտ խեղաթյուրում, հիմնախնդրի միակողմանի քննություն, 4. առաջ են քաշվել հակադարձ փաստարկներ ընդդեմ ադրբեջանական պատմագիտության կեղծարարությունների:

Հիմնաբառեր՝ *Լեռնային Ղարաբաղ, բռնակցում, ապօրինի, որոշում, պատմագիտություն, խեղաթյուրում, Խորհրդային Ռուսաստան, Կովբյուրո:*

Նախաբան

1920 թ. նոյեմբերի 30-ին՝ Հայաստանում խորհրդային կարգերի հռչակումից հետո, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի կողմից հռչակագիր էր հղվել, որում Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարվել էր Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասեր: Հաջորդ իսկ օրվանից Ն. Նարիմանովը հետ կանգնեց հռչակագրի ոգուց և արդեն 1920 թ. դեկտեմբերի 1-ի Բաքվի խորհրդի նիստից հետո հրապարակված հռչակագրում Լեռնային Ղարաբաղը ճանաչեց ոչ թե Խորհրդային Հայաստանի մաս, այլ հայտարարեց, որ պատրաստ է Լեռնային Ղարաբաղի աշխատավոր բնակչությանը տալու ինքնորոշման իրավունք: Ինքնորոշման իրավունք տալու պատրաստակամություն հայտնելով՝ Նարիմանովը ձգտում էր հող նախապատրաստել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մաս ճանաչելու մասին նոյեմբերի 30-ի որոշումը ի չիք դարձնելու և տարածքը Ադրբեջանին բռնակցելու համար: Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ Ադրբեջանի կողմից հրապարակված հռչակագրի սկզբունքներից հրաժարումը և հայկական տարածքների նկատմամբ զավթողական նկրտումների հանդես բերումը՝ դրանք վերջնականապես գրավելու մտադրությամբ, դարձել էին Ադրբեջանի ղեկավար Նարիմանովի քաղաքական ուղեգիծը: Այդ ուղեգծի անշեղ իրականացման նպատակին էր ծառայում Քեմալական Թուրքիայի հետ համագործակցության և հայկական հողերի նկատմամբ թուրքական զավթողականությանն ամեն կերպ օժանդակելու պատրաստակամությունը: Նարիմանովյան այդ քաղաքականությունը հստակ դրսևորվեց Մոսկվայում բացված 1921 թ. խորհրդաթուրքական կոնֆերանսի օրերին: Ադրբեջանի քաղաքական դիմագիծը պարզ արտացոլվեց Նարիմանովի՝ Լենինին հղած երկու նամակներում: Առաջին նամակում, որը գրվել էր 1921 թ. փետրվարի 16-ին, Նարիմանովը ռուսական կողմին կոչ էր անում թուրքերին սիրաշահելու և իրենց ճամբարում պահելու նպատակով հայկական հարցում կատարել զիջումներ և բավարարել թուրքերի պահանջները. «Ես պետք է զգուշացնեմ Ձեզ, որ ընկեր Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը. նա չափից ավելի է հրապուրվում Հայկական հարցով և հաշվի չի առնում այն ամենը, ինչը կարող է խզում առաջացնել անգորացիների հետ Հայկական հարցի պատճառով: Ես կտրականապես հայտարարում եմ Կովկասում ստեղծված դրության մեջ, եթե կամենում եք մեր ձեռքում պահպանել Ադրբեջանը, մենք պետք է ամուր դաշինք կնքենք անգորացիների հետ, ինչ գնով ուզում է լինի: Կրկնում եմ՝ այդ դաշինքը մեզ կտա ողջ մուսուլմանական արևելքը»: (Нагорный Карабах в 1918-1923 гг. 164):

Փոքր ինչ շեղվելով հոդվածի բուն նյութից՝ փորձենք տալ որոշակի պարզաբանում, ինչն ուղղակիորեն լույս է սփռում իրադարձությունների հետագա ընթացքի վրա: Նախ՝ ինչ է նկատի ունեցել Նարիմանովը՝ Չիչերինի կողմից հայկական հարցով հրապուրված լինելու միտքը շեշտելով: Հայտնի է, որ քննարկվող

ժամանակաշրջանում Չիչերինը, որը վարում էր Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի պաշտոնը, հայտնի էր իր առավել սթափ դատողությամբ. միանգամայն ճիշտ էր հասկացել թուրք-ադրբեջանական տանդեմի զավթողական անհագ քաղաքականությունը հայկական հողերի նկատմամբ և մեկն էր, որը բազմիցս իր հրապարակած դիմումներում զգուշացնում էր այդ ամենը խորհրդային պետական այրերին: Իհարկե, չի կարելի ասել, թե Չիչերինի դիրքորոշումը բխում էր հայության շահերից, պարզապես, Չիչերինը, սպասարկելով Խորհրդային Ռուսաստանի շահը, լավ էր հասկացել, որ թուրք-ադրբեջանական հետագա մերձեցումը և վերջիններիս պահանջների բավարարումը կհանգեցներ Անդրկովկասում թուրքական գործոնի ուժեղացմանը և ռուսական ազդեցության թուլացմանը: Նարիմանովը փորձում էր խորհրդաթուրքական կոնֆերանսի նախօրյակին վարկաբեկել Չիչերինին, չեզոքացնել նրա գործունեությունը և բացի դրանից, նամակից ակնառու է նարիմանովյան գործիքակազմի թիրախը, այն է՝ Ադրբեջան-Խորհրդային Ռուսաստան-Քեմալական Թուրքիա ամուր դաշինքի կնքումը՝ ի վնաս հայկական հարցի, ի զոհաբերություն հայկական տարածքների:

Ուշադրություն դարձնենք Նարիմանովի հնչեցրած սպառնալիքին. «Եթե կամենում ենք մեր ձեռքում պահպանել Ադրբեջանը, մենք պետք է ամուր դաշինք կնքենք անգորացիների հետ, ինչ գնով էլ ուզում է լինի»: Երկրորդ նամակը, որը Նարիմանովը գրել է 1921 թ. փետրվարի 21-ին Լենինին, այն մասին է, որ Հայաստանում տեղի է ունեցել փետրվարյան հեղափոխություն և այնտեղ արդեն իսկ տապալվել է խորհրդային իշխանությունը, հետևաբար, ըստ Ադրբեջանի ղեկավարի՝ հայկական հարցն այլևս թուրքական պատվիրակության հետ տեղի ունեցող բանակցություններում տեղ չպիտի ունենա: Ցավոք, տվյալ ժամանակաշրջանում, Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղեծրին առանձին քաղաքական գործիչների հայամետ որևէ դատողություն չէր կարող ազդել: Չիչերինը ինչքան էլ փորձեր բացել ադրբեջանական կողմի նվաճողական կեցվածքը, միևնույնն է, դա որևէ երանգ չէր կարող հաղորդել խորհրդային քաղաքական դիրքորոշմանը: Վերջինս, այդ պահին, ցավոք, տարված լինելով Արևելքում սոցիալիստական հեղափոխության պատրանքներով և դրանում տեսնելով թուրքերի անվերապահ դերակատարությունը հօգուտ համասոցիալիստական ճամբար ստեղծելու նպատակի, հակված էր պաշտպանելու թուրքական շահը, որն իրենով իսկ ենթադրում էր նաև ադրբեջանական շահի հետապնդում, թուրք-ադրբեջանական հետաքրքրությունների բավարարում: Ասվածը լավագույնս արտացոլված է նաև Ստալինի ու Օրջոնոկիձեի հրապարակած նամակներում: Հայտնի է, որ խորհրդաթուրքակամ բանակցությունների ժամանակ 1921թ. սկզբներին, Չիչերինը թուրքական կողմից պահանջել էր Վանի, Մուշի և Բիթլիսի շրջանները տալ Հայաստանին, ինչը բնականաբար առաջացրել է թուրքերի դժգոհությունը: Ռուսաստանի ազգությունների ժողկոմ Ստալինը Լենինին գրած իր նամակում դժգոհել է Չիչերինից՝ թուրքերից նման բան պահանջելու մեղադրանքով: Առավել հատկանշական է Օրջոնոկիձեի դիմումը՝ ուղղված Լենինին, որում Օրջոնոկիձեն նշում է, որ Չիչերինի կողմից նման պահանջով հանդես գալը կարող է Մուստաֆա Քեմալին հեռացնել մեզնից, այսինքն՝ Խորհրդային Ռուսաստանից, և ստիպել նրան «Անտանտի հետ մերձեցման ուղիներ փնտրելու» (Սիմոնյան 40): Ինչպես ակնհայտորեն երևում է, հայկական արդարացի տարածքային պահանջատիրությունը, հայկական շահը ստորադասվում են թուրքական բարեկամությանը, ամեն կերպ Քեմալական Թուրքիան որպես դաշնակից ունենալու Խորհրդային Ռուսաստանի պատրաստակամությանը: Տեղին է հիշատակել նաև Ռուսաստանի ազգությունների ժողկոմատի «Жизнь национальностей» թերթում հրապարակված Սկաչկոյի հոդվածը՝ խորհրդաթուրքական բանակցությունների և պայմանագրի ստորագրման նախօրյակին, որում հեղինակը գրում էր, որ Հայաստանը պետք է ղեկավարվի հանուն համաշխարհային հեղափոխության «ազգային զոհաբերությունների մասին լենինյան

սկզբունքով, որ վաղ թե ուշ Հայաստանը ստիպված է լինելու համաշխարհային հեղափոխությանը զոհաբերել իր նախկին տարածքները և այնտեղ մնացած իր ժողովրդին» (Скачко 21): Փաստորեն, ինչպես տեսնում ենք, Մոսկվայի խորհրդաթուրքական բանակցություններն արդեն իսկ կանխորոշված էին, հայկական հարցը լռեցված, Ադրբեջանի կողմից ամեն ինչ արված էր հակահայկական մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ, ուստի և զարմանալի չէր, որ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ին կնքված պայմանագիրը հանգեցրեց հայկական տարածքների կորստին: Չարաբաստիկ այդ պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսի նահանգը, Արդահանը, Սուրմալուի գավառը: Նախիջևանի մարզը անջատվում էր Հայաստանից և հանձնվում Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ այն չէր զիջվելու որևէ երրորդ պետության, հասկանալի է, որ երրորդ պետություն ասելով՝ հասկացվում էր Հայաստանը: Փաստորեն, Ադրբեջանը տեր դարձավ Նախիջևանին, որի վերաբերյալ դեռ ոչ վաղ անցյալում Նարիմանովը հայտարարել էր, թե ճանաչում է այն որպես Խորհրդային Հայաստանի մաս: Մոսկվայի պայմանագրով ձեռք բերած արդյունքները մոտեցնում էր պանթուրքիզմի գաղափարախոսության հետապնդած նպատակը, որի հերթական զոհը պետք է դառնար Արցախը: Նախիջևանի կլանումից հետո խորհրդաթուրքական դաշինքի հաջորդ զոհը դարձավ Լեռնային Ղարաբաղը:

Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ

1921 թ. սկզբներից կրկին Լեռնային Ղարաբաղի շուրջ թեժացան կրքերը: Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների շուրջ վերջնական որոշումներ կայացնելու նպատակով ստեղծվեց խառը հանձնաժողով երեք հանրապետությունների ներկայացուցիչներից՝ Ս. Կիրովի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Ա. Սվանիձեն և Ս. Թողրիան՝ Վրաստանից, Մ. Հուսեյնովը, Մ. Հաջինսկին, և Ա. Ռասուլզադեն՝ Ադրբեջանից, Ալ. Բեկզադյանը՝ Հայաստանից: Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Աբրահամյանը. «Կոպտորեն խախտվում էր հանձնախմբի համամասնական ներկայացուցչության սկզբունքը» (Աբրահամյան 226): 1921թ. հունիսի 3-ին տեղի ունեցավ Կովբյուրոյի նիստ՝ Օրջոնոկիձեի, Մախարաձեի, Նարիմանովի, Մյասնիկյանի, Օրախելաշվիլիի, Նազարեթյանի, Ֆիգնատերի, Կամինսկի և Էլիավի մասնակցությամբ: Որոշում ընդունվեց Լեռնային Ղարաբաղը ճանաչել ՀՀ մաս: Որոշման մեջ 5-րդ կետով ասվում էր. «Հայկական կառավարության դեկլարացիայում ցույց տալ Լեռնային Ղարաբաղի պատկանելությունը Հայաստանին» (Нагорный Карабах. историческая справка 16): Ինչպես տեսնում ենք, ընդունված որոշման տակ ստորագրել էր նաև Նարիմանովը: Ադրբեջանցի պատմաբան Հասանլին փորձում էր արդարացնել Նարիմանովի ստորագրությունը և համաձայնությունը, նշելով, թե այդ որոշումը գաղտնի կերպով էր արված՝ դրանով փորձելով իբր ցույց տալ Նարիմանովի անտեղյակությունը (Гасанлы 137): Նախ՝ որոշում ընդունող հանձնաժողովը ինքն է որոշում և քննարկում հարցերը հույժ գաղտնի, թե բաց ձևաչափով, այնպես որ անհնար է, որ Նարիմանովը տեղյակ չլիներ հունիսի 3-ին Լեռնային Ղարաբաղի մասին ընդունած որոշումից: Ի կատարումն հունիսի 3-ի Կովբյուրոյի վերոնշյալ որոշման՝ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը 1921 թ. հունիսի 12-ին հայտարարում է. «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմյանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության անբաժան մասը»: ՀՍԽՀ ժողկոմների խորհրդի նախագահ՝ Ա. Մյասնիկյան, քարտուղար՝ Մ. Ղարաբեկյան (Нагорный Карабах в 1918-1923 гг. 636):

Ադրբեջանցի պատմաբան Մուստաֆազադեն գրում է. «Ընդհանուր առմամբ, 1921 թ. առաջին կեսին Բաքուն կարողացավ ակտիվորեն հակառակվել Մոսկվայի բոլոր փորձերին՝ Լեռնային Ղարաբաղին տալ կարգավիճակ, սակայն 1921 թ. հունիսին

հայ կոմունիստները փորձեցին նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել» (Мустафазаде 227): Պարզ է, որ նախաձեռնություն ասելով՝ ադրբեջանցի պատմաբանը նկատի ուներ հայկական կողմի 1921 թ. հունիսի 12-ի որոշումը, որը միանգամայն հստակ իրավական հիմք ուներ: Սակայն այստեղ կարևոր է հեղինակի այն միտքը, որում վերջինս նշում է Բաքվի՝ Լեռնային Ղարաբաղն իրենց պահելու ջանքերի և Մոսկվային հակադարձելու մասին, ինչն ակնհայտ ցույց է տալիս, որ չնայած ադրբեջանական կողմը 1920 թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ հայտարարել էր, որ վիճելի տարածքային հարցեր այլևս գոյություն չունեն երկու պետությունների միջև, այդուհանդերձ շարունակել է ակտիվ պայքարը այդ տարածքները կլանելու ուղղությամբ: Եվ նույնիսկ Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալու մասին նարիմանովյան հայտարարությունն ընդամենը խայծ էր, սակայն ի սկզբանե մերժված: Դա է պատճառը, որ Ադրբեջանը ամեն կերպ փորձում էր մերժել, չիրականացնել Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալու մասին 1920 թ. դեկտեմբերի 1-ի իր հայտարարությունը:

Ադրբեջանցի պատմաբան Հասանլին գրում է, որ հայկական կողմի որոշումը՝ 1921 թ. մայիս-հունիսին Լեռնային Ղարաբաղը ճանաչելու Խորհրդային Հայաստանի մաս, շտապողական և իրավական տեսանկյունից անօրինական էր (Гасанлы 139): Պատմաբանը նշում է, որ Թիֆլիսում 1921 թ. հունիսի 15-ին նշանակված էր անդրկովկասյան հանրապետությունների սահմանների որոշման հանձնաժողովի նիստ, որը պետք է քննարկեր սահմանների կարգավորման խնդիրները: Եվ իբրև թե հայկական կառավարությունը հունիսի 12-ի իր որոշմամբ ցանկացել է Ադրբեջանին դնել արդեն իսկ կատարված փաստի առջև՝ նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի՝ Խորհրդային Հայաստանի կազմում արդեն ընդգրկված լինելը: Սակայն ի՞նչ անօրինականության և շտապողականության մասին է խոսքը, երբ հայկական կողմը գործել է բացառապես իրավաչափ սկզբունքներով: Փաստ է, որ նոյեմբերի 30-ին Ադրբեջանի Հեղկոմի հռչակագրում ադրբեջանական կողմը հայտարարել էր Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու մասին: 1921 թ. հունիսի 3-ին ՌԿ/Բ/Կ Կովբյուրոյի նիստում, որին մասնակցել և քվեարկել էր նաև Նարիմանովը, որոշում էր ընդունվել՝ Խորհրդային Հայաստանը պետք է հռչակագիր ընդունի և Լեռնային Ղարաբաղը ճանաչի որպես իր մաս: Ոչ թե հայկական կողմն էր շտապում, այլ ադրբեջանական կողմն էր քայլ առ քայլ գործում հայկական տարածքները բռնակցելու ուղղությամբ և չնայած 1920 թ. նոյեմբերի 30-ի հայտարարության ոգուն՝ ձգտում էր շրջանցել այն: Դա է պատճառը, որ արդեն հունիսի երկրորդ կեսից Նարիմանովը միանգամայն հստակ հայտնեց իր դիրքորոշումը՝ մերժելով նախորդ բոլոր հայտարարությունները:

1921 թ. հունիսի 15-ին, ի կատարումն հունիսի 12-ի որոշման, վճռվեց Լեռնային Ղարաբաղ ուղարկել Ասքանազ Մռավյանին՝ որպես Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչի: Սակայն վերջինս չկարողացավ գործունեություն ծավալել այնտեղ՝ Ադրբեջանից հնչող բողոքների պատճառով: 1921թ. հունիսին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղի հարցում սկսեց ավելի սանձարձակ գործել՝ հրաժարվելով ոչ միայն իր նախորդ որոշումներից, այլ նաև սկսեց անթաքույց պահանջել Լեռնային Ղարաբաղը՝ գործի դնելով սպառնալիքների փորձված մարտավարությունը: Որպես հիմնավորում՝ առաջ էր քաշվում հիմնականում տնտեսական անհասկանալի գործոնը: Հատկանշական է, որ ադրբեջանցի պատմաբան Հասանլին իր հոդվածում ևս առաջնորդվում է բացառապես տնտեսական գործոնի առաջմղմամբ: Այսպես նա մեջբերում է Նարիմանովի՝ Օրջոնոկիձեին ուղղված այն միտքը, որում ասված էր. «Մեր հայ ընկերները բացառապես տարածքի մասին են մտածում, այլ ոչ թե հայ և մուսուլմանական աղքատ բնակչության բարեկեցության և հեղափոխության ամրապնդման համար» (Гасанлы 140): Այս պարզ միտքը լիովին արտացոլում է

նարիմանովյան պայքարի մարտավարությունը՝ մի կողմից մեջբերել Ղարաբաղի տնտեսական կախվածությունը Բաքվից, այսպես կոչված տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից Ղարաբաղի միացումը Ադրբեջանին, մյուս կողմից էլ՝ Նարիմանովի գործելաոճին հատուկ սպառնալիքի լեզուն, ըստ որի հարցը հօգուտ Ադրբեջանի չլուծելու դեպքում՝ հակախորհրդային ուժերը կակտիվանան Ադրբեջանում և սոցիալիստական հեղափոխությունը վտանգի տակ կդրվի: Հաջորդ քայլը Նարիմանովի կողմից բողոքի նոտա հղելն էր Օրջոնոկիձեին և Ալ. Մյասնիկյանին՝ հունիսի 12-ի որոշման և Լեռնային Ղարաբաղում՝ Ասքանազ Մռավյանի՝ արտակարգ կոմիսար նշանակելու կապակցությամբ: Ինչպես արդեն նշեցինք, 1921 թ. հունիսի 12-ի Հայաստանի Ժողկոմխորհի կողմից ընդունված հռչակագրում նշված էր, որ Լեռնային Ղարաբաղն այսուհետև համարվում է Խորհրդային Հայաստանի մաս՝ հիմք ընդունելով Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հեղկոմի հռչակագիրը և Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջև համաձայնությունը:

Ադրբեջանցի պատմաբան Տ. Քոչառլին, աղավաղելով պատմական փաստերը, գրում է. «1920 թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի Հեղկոմի հռչակագիրը, որը հրապարակվել էր Երևանում, հայտարարել է Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալու, այլ ոչ թե այն Հայաստանին տալու մասին: Այդ պատճառով էլ Հայաստանի կողմից հիշյալ հռչակագրին հղում կատարելն անհիմն պետք է համարել» (Кочарли 116): Միանգամայն ակնհայտ է, որ Քոչառլին անկեղծ չէ: Փաստի շրջանցումը չի նշանակում, որ այն գոյություն չունի: 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմի հռչակագրում բառացիորեն ասված էր. «Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությունը, ստանալով Հայաստանում ապստամբած գյուղացիության անունից Սովետական սոցիալաիստական հանրապետության հաստատման մասին, ողջունում է եղբայրական ժողովրդին: Այսօրվանից Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարվում են Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության մասեր» (Կոմունիստ, 7 դեկտեմբերի, 1920): Այս կարևոր փաստի մասին Քոչառլին լռում է: Լռում է նաև հենց այդ հռչակագրի հիման վրա արված Օրջոնոկիձեի, Ստալինի հայտարարությունների մասին, որոնցում դարձյալ նշված էր վիճելի տարածքները որպես Խորհրդային Հայաստանի մասեր ճանաչելու փաստի մասին: Ճիշտ է, հաջորդ օրը Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունը Նարիմանովի աճպարարությամբ կրեց թեթևակի խմբագրում, որով Լեռնային Ղարաբաղը ոչ թե ճանաչվում էր ՀՀ մաս, այլ նրան տրվելու էր ինքնորոշման լիիրավ իրավունք: Քոչառլին, շրջանցելով նոյեմբերի 30-ի դեկլարացիան, հիշատակում է միայն դեկտեմբերի 1-ի դեկլարացիան:

1921 թ. հունիսի 25-ին Անդրկովկասի սահմանները որոշող հանձնաժողովի նիստում նրա նախագահ Կիրովը հայտարարեց, որ քաղաքական նկատառումներով տարածքային վերաձևումներ չեն լինելու (Нагорный Карабах в 1918-1923 гг. 42): Բանն այն է, որ հանձնաժողովի անդամ Ալ. Բեկզադյանը առաջարկել էր անել որոշ տարածքային զիջումներ, ընդ որում, խիտ հայ բնակչություն ունեցող շրջաններում՝ հաշվի առնելով Հայաստանի տարածքային անբարենպաստ վիճակը և հանուն ընդհանուր համերաշխության, հանուն մեկընդմիշտ ամենաանկեղծ բարեկամական հարաբերություններ հաստատելը:

1921 թ. հունիսի 27-ին տեղի ունեցավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի համատեղ նիստը, որտեղ անընդունելի համարվեց Բեկզադյանի առաջարկն այն մասին, որ հայ բնակչությամբ տարածքները միացվեն Հայաստանին, իսկ ադրբեջանական բնակչությամբ տարածքները՝ Ադրբեջանին: Ադրբեջանցի պատմաբան Հասանլին գրում է. «Քաղբյուրոն և Կազմբյուրոն անհիրավաչափ են համարել Լեռնային Ղարաբաղի մասին Բեկզադյանի հարցադրումը՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի անվիճելի տնտեսական կախվածությունը Ադրբեջանից» (Гасанлы 139): Հեղինակը, մեջբերելով նիստի ժամանակ ընդունված

սույն որոշումը, դրանով իսկ փաստում է, որ Ադրբեջանի կողմից անտեսվում է պատմական, ժողովրդագրական գործոնը և առաջ է քաշվել տնտեսական կախվածության հորինված գործոնը: Վերջինս գրում է. «Համաձայն Նարիմանովի հռչակագրի՝ հարցի միակ լուծումը գյուղերում հայ և մուսուլմանական բնակչության ներգրավվումն է սովետական լայն շինարարության մեջ: Թե ո՞ր հռչակագրի մասին է խոսքը, անհասկանալի է: Եթե խոսքը վերաբերում է Բաքխորհրդի 1920 թ. դեկտեմբերի 1-ի Նարիմանովի հռչակագրին, ապա այնտեղ նման ձևակերպում չկա»: Նարիմանովը հայտարարել էր նաև, որ հարցը պետք է լուծվեր միայն այդ հարթությունում (այսինքն՝ տնտեսական գործոնի հաշվառմամբ), ինչպես նաև սպառնացել՝ «ժողկոմխորհը պատասխանատվությունն իր վրայից թոթափում է, եթե Խորհրդային Հայաստանը նման քայլով ուզում է տպավորություն գործել դաշնակների և Հայաստանի անկուսակցական զանգվածների վրա, ապա չպետք է մոռանալ նաև, որ նման քայլով մենք Ադրբեջանում արթնացնում ենք հենց նմանատիպ հակասովետական խմբերի, ինչպիսիք դաշնակներն են» (Гасанлы 140): Ասվածը պարզ ցույց է տալիս, որ խորհրդային կարգը ընդամենը դիմակ էր Նարիմանովի համար, որ վերջինս համառորեն տարել և տանում է մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Հագեցման գինը Լեռնային Ղարաբաղն ամեն կերպ կլանելն է և իր նախկին հայտարարությունից քայլ առ քայլ հրաժարվելը: Երկդիմի մանիպուլյատիվ խաղը Նարիմանովի գործելաոճն էր: Նույն ժամանակ Հուսեյնովի հետ հեռախոսազրույցում Նարիմանովը ակնհայտորեն հրաժարվեց նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հնչեցված որոշումից և հայտարարեց. «Ասացե՛ք, որ դա Քաղ. և Կազմբյուրոյի կարծիքն է. եթե նրանք հղում են անում իմ հռչակագրին, ապա այնտեղ բառացիորեն ասված է հետևյալը՝ Լեռնային Ղարաբաղին տրվում է ինքնորոշման իրավունք» (Հարությունյան 284): Հասանլին իր հոդվածում այսպիսի մի հարցադրում է ձևակերպում. «Ո՞վ է հայերին առիթ տվել հիմնվելու Ադրբեջանի քաղաքական ղեկավարության վրա»: Ըստ հեղինակի՝ նման անանուն համաձայնություն Ադրբեջանի անունից հայերին տվել են անձինք, որոնք իրենց ձեռքում են կենտրոնացրել Կովկասում իրական իշխանությունը՝ այսինքն՝ Օրջոնոկիձեն և Կիրովը (Гасанлы 140): Հասանլին ակնհայտորեն խեղաթյուրում է պատմական փաստը՝ շրջանցելով այն պարզ իրողությունը, որ հենց ինքը Նարիմանովն է 1920 թ. նոյեմբերի 30-ին հայտարարել, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասն է: Նույն միտքը հնչեցրել նաև հաջորդ օրը հրավիրված Բաքխորհրդի նիստում: Նարիմանովի ելույթից հետո ելույթ ունեցած Օրջոնոկիձեն, հղում անելով Նարիմանովին, հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կողմից ճանաչվեց որպես Խորհրդային Հայաստանի մաս: Այլ բան, որ իր ասածը խորամանկորեն հերքելու և դրանից հրաժարվելու հիմք ստեղծելու նպատակով հաջորդ օրը գրավոր հրապարակված տեքստում՝ Նարիմանովի խմբագրմամբ, Լեռնային Ղարաբաղին արդեն տրվում էր ազատ ինքնորոշման իրավունք: Այնպես որ, 1921թ. հունիսի 12-ին Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու մասին, օդից չէր, ոչ էլ Ստալինի կամ Օրջոնոկիձեի թելադրանքով էր:

1921թ. հուլիսի 4-ի և հուլիսի 5-ի որոշումները: Լեռնային Ղարաբաղի բռնակցումը

Եվ այսպես, Նարիմանովի հրավիրած ժողկոմխորհի նիստը հունիսի 28-ին մերժեց Խորհրդային Հայաստանի հռչակագիրը և ՀՀ կողմից Լեռնային Ղարաբաղում լիազոր ներկայացուցիչ նշանակված Ա. Մռավյանի լիազորությունները դադարեցնելու հարցը դրեց: Փակուղում հայտնված Արցախի հարցը լուծելու նպատակով՝ 1921թ. հուլիսի 4-ին հրավիրվեց ՌԿ/բ/Կ Կենտկոմի Կովբյուրոյի պլենում: Վերջինիս մասնակցում էին Օրջոնոկիձեն, Մախարաձեն, Մյասնիկյանը, Կիրովը, Նարիմանովը,

Նազարեթյանը, Ֆիգատները: Ներկա էր նաև Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմ Ստալինը: Հարցի քննարկման ժամանակ երևան եկան երկու տեսակետներ, և քվեարկության դրվեցին հետևյալ առաջարկները.

1. Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում: Կողմ քվեարկեցին Նարիմանովը, Մախարաձեն, Նազարեթյանը: Դեմ՝ Օրջոնոկիձեն, Կիրովը, Մյասնիկյանը, Ֆիգատները:

2. հանրաքվե անցկացնել ամբողջ Ղարաբաղում, ինչպես հայ, այնպես էլ մուսուլմանական բնակչության մասնակցությամբ: Կողմ քվեարկեցին Նարիմանովն ու Մախարաձեն:

3. Ղարաբաղի լեռնային մասը մտցնել Հայաստանի կազմի մեջ: Կողմ քվեարկեցին Օրջոնոկիձեն,Մյասնիկյանը, Ֆիգատները, Կիրովը:

4. հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ միայն հայերի շրջանում: Կողմ քվեարկեցին Օրջոնոկիձեն, Մյասնիկյանը, Ֆիգատները, Կիրովը:

Որոշեցին. Լեռնային Ղարաբաղը մտցնել Խորհրդային Հայաստանի կազմ, հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում: Որոշումից, սակայն, չափազանց դժգոհ էր մնացել Նարիմանովը, որը կրկին գործի դրեց սպառնալու իր գործելաոճը: Նա պահանջեց հաշվի առնել հարցի կարևորությունը Ադրբեջանի համար և այն փոխադրել ՌԿ/բ/Կ Կենտկոմ՝ վերջնական քննարկման համար: Ադրբեջանի ղեկավարի հայտարարությունից հետո ընդունվեց նոր որոշում. «Նկատի ունենալով, որ Ղարաբաղի հարցը առաջացրել է լուրջ տարաձայնություններ, ՌԿ/բ/Կ կենտկոմի կովկասյան բյուրոն անհրաժեշտ է համարում այն փախադրել ՌԿ/բ/Կ կենտկոմ՝ վերջնական որոշման համար»: Սակայն հարցը չտեղափոխվեց ՌԿ/բ/Կ, այլ հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, կրկին հրավիրվեց Կովբյուրոյի արտահերթ պլենում: Կայացվեց լրիվ հակառակ որոշումը: **Որոշեցին՝** ա) ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունից՝ Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել ԱԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն: բ) հանձնարարել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին՝ որոշելու ինքնավար մարզի սահմանները և ներկայացնելու ՌԿ/բ/Կ կենտկոմի հաստատմանը: գ) Կովբյուրոյի նախագահությանը հանձնարարել՝ պայմանավորվելու Հայաստանի կենտկոմի և Ադրբեջանի կենտկոմի հետ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի թեկնածուի մասին: դ) Ադրբեջանի կենտկոմին՝ պարզել և կովբյուրոյի հաստատմանը ներկայացնել ինքնավարության ծավալը (Нагорный Карабах в 1918-1923 гг.): Ադրբեջանական պատմագիտությունը հուլիսի 4-ի որոշմամբ նշված «մտցնել» և հուլիսի 5-ի որոշմամբ նշած «թողնել» բառերը, ընդհանրապես, փաստարկների հաղթաթուղթ է ներկայացնում: Այսպես, Տ. Քոչառլին, քննադատելով Գ. Ոսկանյանին, գրում է. «Հարցը Կովբյուրոյում (հուլիսի 4-ի մասին է խոսքը) (մեկնաբանությունը իմն է՝ Ա.Բ. Խաչատրյան) դրված էր հետևյալ կերպ. «թողնել Ղարաբաղը Ադրբեջանի սահմաններում, թե մտցնել Հայաստանի կազմ»: Քվեարկության արդյունքում որոշվեց. մտցնել Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ի մեջ»: Այնուհետև մեջբերելով հայ հեղինակների, որոնք «մտցնել» բայի փոխարեն օգտագործել են «թողնել» բայը, գրում է, թե դա արվում էր այն նկատառումով, որպեսզի տպավորություն ստեղծվի, թե Լեռնային Ղարաբաղը գտնվում էր Հայաստանի կազմում և բարձրագույն մարմին ՌԿ/բ/Կ ԿԿ-ն Անդրկովկասում ամրագրել է նրա տարածքային ստատուս քվոն՝ որոշելով այն «թողնել» այնտեղ: Ուղիղ ասենք՝ ազնիվ չէ, գրում է Քոչառլին (Кочарли 123): Այժմ դիտարկենք Քոչառլիի ազնվությունը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու հարցի վերաբերյալ: Ըստ ադրբեջանցի պատմաբանի՝ եթե Կովբյուրոյի պլենումի որոշման մեջ նշված է թողնել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում, ապա դա արդեն իսկ նշանակում է, որ թողնել կարելի է այն, ինչ այդտեղ է եղել պատմականորեն, իսկ «մտցնել» տվյալ տարածքը տվյալ պետության կազմ,

նշանակում է արհեստականորեն կտրել և միացնել մեկ այլ պետության կազմ: Մեր խորին համոզմամբ՝ հուլիսի 5-ի փաստաթղթի ռուսալեզու բնօրինակում оставить բառը включить բառի փոխարեն ընտրվել է Նարիմանովի անընդհատ ծեծվող հայտարարության պատճառով, թե Լեռնային Ղարաբաղի հայությունը, 1919 թ. օգոստոսի 22-ին կայացած յոթերորդ համագումարում, որոշել էր իրեն ճանաչել Ադրբեջանի կազմում: Հիշյալ ժամանակավոր համաձայնությունը ադրբեջանական կողմը դարձրել էր հաղթաթուղթ այն մասին, թե Լեռնային Ղարաբաղն ինքն իրեն ճանաչել է Ադրբեջանի կազմում: Մինչդեռ միանգամայն ակնհայտ է ադրբեջանական կողմի միակողմանի դիրքորոշումը: Բանն այն է, որ արցախահայությունը նման համաձայնություն կնքել էր խիստ ժամանակավոր, սրի ու սպառնալիքի ներքո և հետագա արյունահեղությունից խուսափելու նպատակով: 1919 թ. օգոստոսից առաջ և հետագա արցախահայության բոլոր համագումարներում հայությունը պարզ արտահայտել է իր դիրքորոշումը, որ չի ճանաչում Ադրբեջանի օտարամուտ իշխանությունը: Սակայն այդ մասին ադրբեջանական կողմը լռում էր և թմբկահարում էր միմիայն արցախահայության յոթերորդ համագումարի ժամանակավոր որոշումը:

Եզրակացություն

Ի մի բերելով պատմահիրավական հիմքերը՝ փաստում ենք, որ Լեռնային Ղարաբաղը երբևէ չի գտնվել Ադրբեջանի կազմում մինչև 1921թ. հուլիսի 5-ի որոշումը: Բերենք առնվազն երեք փաստ, որոնք անժխտելիորեն ապացուցում են, որ Լեռնային Ղարաբաղը չի գտնվել ոչ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (1918-1920), ոչ էլ 1920 թ. ապրիլի 28-ից խորհրդայնացված Ադրբեջանի կազմում՝ մինչև 1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի չարաբաստիկ որոշումը:

1. 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) չի ճանաչվել միջազգային համայնքի, մասնավորապես՝ Ազգերի լիգայի կողմից: 1920 թ. դեկտեմբերի 1-ին Ազգերի լիգայի Ասամբլեայի կողմից ընտրված 5-րդ կոմիտեն իր 4-րդ հանդիպման ժամանակ, քննելով ԱԴՀ դիմումը, հանգել է հետևյալ եզրահանգման. ա. Ազգերի լիգայի Դաշնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ «Ադրբեջանի հանրապետությունը չի կարող համարվել որպես դե յուրե լիովին ինքնիշխան պետություն, քանի որ այն նախկինում դե յուրե չի ճանաչվել Ազգերի լիգայի որևէ անդամ պետության կողմից»: Հաջորդ կետով ասվում էր՝ դժվար է պարզել այն տարածքի ճշգրիտ սահմանները, որտեղ Ադրբեջանի կառավարությունն իրականացնում է իր իշխանությունը: Հարևան երկրների հետ սահմանային վեճերը թույլ չտվեցին ճշգրիտ որոշելու Ադրբեջանի սահմանները: Կոմիտեն որոշեց, որ Դաշնագրի պայմանները թույլ չեն տալիս Ադրբեջանին ներկա պայմաններում անդամակցել Ազգերի լիգային» (Ավագյան 11) :

2. Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Լեռնային Ղարաբաղը դարձյալ չի գտնվել այդ պետության կազմում: Բավական է հիշատակել, որ 1920 թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանի Հանրապետությունը համաձայնագիր են ստորագրում, որում ասվում էր. «Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի շրջաններում տեղակայվելու են Խորհրդային զորքեր, սակայն դա չի նշանակում, որ կանխորոշվում է այդ տարածքների վերջնական պատկանելությունը: Խնդիրը պետք է լուծվի Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվելիք պակտով» (Ավագյան 11):

3. 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղի ինքնակառավարումն իրականացվում էր համագումարների միջոցով, որոնցում հստակ արտահայտված էր ազգային ինքնորոշման սկզբունքը: Համագումարներում բազմիցս ընդունված որոշումները՝ առ այն, որ Լեռնային Ղարաբաղի հայությունը երբևէ չի ընդունել և չի ընդունի Ադրբեջանի իշխանությունը, ինչպես նաև ծավալած ազգային-ազատագրական պայքարը, վառ ապացույց են այն հստակ իրողության, որ անհնար է մի պետության

կազմում ունենալ վարչական միավոր, եթե այդ պետության սահմանները ճշգրիտ որոշված չեն, եթե տվյալ վարչական միավորի բնիկ ժողովուրդը պայքարում և չի ընդունում օտարածին, իրեն պարտադրվող իշխանությունը: Եվ այսպիսով, 1921 թ. հուլիսի 5-ի՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմ ներառելու մասին որոշման ապօրինությունը կասկած չի կարող հարուցել, մինչդեռ ադրբեջանական պատմաբանները միանգամայն հակասական, իրարամերժ և միակողմանի դիտարկումներով փորձում են խեղաթյուրել հայտնի պատմական իրողությունը: Այսպես, ադրբեջանցի պատմաբան Նիֆտալիևը իբր համեմատության մեջ դիտարկելով 1921 թ. հուլիսի 4-ի և հուլիսի 5-ի որոշումները, գրում է. «Հուլիսի 4-ին կայացած քվեարկությունը քննադատության չի դիմանում: Այնտեղ ոչ մի փաստարկ չի առաջ քաշվել հօգուտ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանից անջատելու» (Нифталиев 113): Հիշենք, որ հուլիսի 5-ին ընդունած Լեռնային Ղարաբաղի հարցի՝ հօգուտ Ադրբեջանի լուծման միակ փաստարկը, որը կեղծ և ոչինչ չներկայացնող փաստարկ է, տարածքների միջև առկա իբր թե տնտեսական կապերն են: Հաջորդ ոչ ճիշտ դրվածքը Նիֆտալիևը համարում է այն, որ հուլիսի 4-ի որ ըստ որոշման՝ պետք էր հանրաքվե անցկացնել Լեռնային Ղարաբաղի միայն հայ բնակչության շրջանում՝ անտեսելով ադրբեջանական բնակչության ձայնը: Մինչդեռ պատմաբանը մոռանում է, որ Լեռնային Ղարաբաղի տվյալ ժամանակաշրջանի հայ բնակչությունը ընդհանուր բնակչության շուրջ 90 տոկոսն էր: Նիֆտալիևը գրում է, որ «նման որոշումը ժողովրդավարությունից շատ հեռու էր, և հանրաքվեի արդյունքները արդեն իսկ կանխորոշված էին, իսկ դրա իրականացման ձևը արտահայտում է պարզ և ակնառու ճշմարտություն, որ կենտրոնի բոլշևիկյան ուժերը համոզված էին, որ Լեռնային Ղարաբաղի հայության մեծամասնությունը քվեարկելու էր Ադրբեջանից անջատման օգտին» (Нифталиев 113): Ցավոք, Նիֆտալիևը մոռանում է, Լեռնային Ղարաբաղի հայության բազմիցս հրավիրված համագումարները, որտեղ հստակ որոշվել էր հայության հստակ դիրքորոշումը՝ լինելու Հայաստանի Հանրապետության կազմում և չընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Ղարաբաղի հայության ազատ ինքնորոշման կամքն արտահայտող համագումարներն անտեսվեցին Ադրբեջանի կողմից, որի մասին բնականաբար պիտի լռեր Նիֆտալիևը: Այն, որ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի քաղաքականությունը զուտ զավթողական էր, ագրեսիվ և ժողովրդավարական բոլոր չափանիշներից հեռու, արտահայտվում է նաև հարցի առնչությամբ ադրբեջանցի պատմաբան Իսմաիլովի հետևյալ մտքերում. «Խորհրդային Ռուսաստանը, թաքնվելով ազգամիջյան խաղաղության, աշխատավորների եղբայրության, սահմանների բացակայության և այլ լոզունգների հետևում, սկսեց ադրբեջանական հողերը բացեիբաց տալ Հայկական ԽՍՀ-ին: Այդպես տեղի ունեցավ Զանգեզուրի մի մասի հետ նույնպես»: Ըստ ադրբեջանցի պատմաբանի՝ Զանգեզուրի մասին որոշումն ընդունվեց Հայաստանի խորհրդայնացման առթիվ 1920 թ. նոյեմբերի 30-ի Ադրհեկղկոմի հանդիսավոր նիստում: Ինչպես հայտնի է, այդ նույն կապակցությամբ Հայաստանի աշխատավոր բնակչությանն ուղղված հեռագրում ադրբեջանական կողմը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը ճանաչեց Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասեր: Խեղաթյուրելով պատմական իրողությունը՝ հեղինակը գրում է, թե իբր Լեռնային Ղարաբաղի աշխատավոր բնակչությանը տրվել է ինքորոշման իրավունք, մինչդեռ ինքնորոշման իրավունքի վերաբերյալ հայտարարությունը կատարվել է դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի նիստում: Հաջորդ խեղաթյուրումն արտացոլվում է հայկական կողմի նկատմամբ կատարվող այն մեղադրանքներում, թե իբր վերջինս կեղծել է ադրբեջանական փաստաթղթի այն կետը, որով նշված է Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալու մասին և, սեփական հայեցողությամբ խմբագրելով այն, Հայաստանի ղեկավարությունը սկսեց պահանջել, որ Լեռնային Ղարաբաղը տրվի իրեն: Այնուհետև ադրբեջանցի պատմաբանը նշում է, թե 1921 թ. հուլիսի 4-ի Կովբյուրոյի նիստում ձայների մեծամասնությամբ որոշվեց Լեռնային Ղարաբաղը տալ

Ադրբեջանին: Սակայն Նարիմանովը կատեգորիկ անհամաձայնություն հայտնեց նման որոշման ընդունման դեմ՝ համարելով այն անարդարացի և կանխատեսեց, որ հարցի նման լուծումը հետագայում կբերի քաղաքական ցնցումների: Այնուհետև հեղինակը գրում է, թե իբր Նարիմանովի բերած փաստարկների հիմնավորվածությունը նիստի մասնակիցներին ստիպեց վերանայել հարցը: Հուլիսի 5-ին ընդունվեց նոր որոշում, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը թողնվեց Խորհրդային Ադրբեջանի կազմում՝ պայմանով, որ նրան կշնորհվի լայն ինքնավարություն՝ Շուշի կենտրոնով (Исмаилов 215): Այն, որ Նարիմանովի ջանքերի արդյունքում է կրկին վերանայվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1921 թ. հուլիսի 5-ին, իսկապես ճիշտ է, սակայն ադրբեջանցի պատմաբան Իսմայիլովի կողմից նշված Նարիմանովի իբր թե մեջբերած փաստերի հիմնավոր լինելու մասին խոսելն առնվազն հակագիտություն է առնվազն երկու պատճառով՝ 1. հուլիսի 5-ին հարցը չի դրվել քվեարկության, այլ ընդամենը ընդունվել է որոշում: 2. հարցը չի լուծվել՝ հաշվի առնելով պատմական, ժողովրդագրական, ազգային պատկանելության գործոնները, այլ ընդամենը տնտեսական մտացածին հիմնավորում են առաջ քաշել: Հուլիսի 4-ի որոշումը հուլիսի 5-ի որոշմամբ փոխարինելը տեղի ունեցավ Նարիմանովի սպառնալիքների առջև ընկրկած Մոսկվայի թելադրանքով: Գաղտնիք չէ, որ հարցի որոշման նման կտրուկ շրջադարձը կարող էր տեղի ունենալ միմիայն Մոսկվայի թելադրանքով: Վերջինս էլ, ցավոք, առաջնորդվեց տվյալ պահին ադրբեջանաթուրքական համերաշխության և վերջինիս դաշինքը չկորցնելու նպատակամղմամբ, համասոցիալիստական հեղափոխության իր դիրքերը պահպանելու և Ադրբեջանին իր կողմում պահելու հստակ մտադրությամբ: Նման ոչ արդարացի, ոչ հստակ գործելաոճի զոհը դարձան հայկական մի շարք տարածքներ, այդ թվում և Լեռնային Ղարաբաղը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան, Հրանտ. *Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա 1917-1923*, Երևան, 2003:
2. Ավագյան, Շահեն. *Լեռնային Ղարաբաղ, իրավական ասպեկտներ,* Երևան, 2010:
3. Հարությունյան, Համլետ. *Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ.,* Երևան, 1997:
4. *Կոմունիստ*, 7 դեկտեմբերի, 1920թ.:
5. Սիմոնյան, Հրաչիկ. *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*, Երևան, 1991:
6. Гасанлы, Джамиль. «Нагорный Карабах: Старые заблуждения в новой интерпретации». *Кавказ и Глобализация*, Том 5, Выпуск 3-4, 2011.
7. Исмаилов, Эльдар. *Очерки по истории Азербайджана*, Баку, 2010.
8. Кочарли, Тофик. *К истории карабахского вопроса, (вымыслы и действительность)*, Баку, 2009.
9. Мустафа-заде, Рахман. *Две республики. Азербайджано-российские отношения в 1918-1922 гг.,* Москва, 2006.
10. *Нагорный Карабах, Историческая справка*, Ереван, 1988.
11. *Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов/ под ред. В. А. Микаеляна*, Ереван, 1992.
12. Нифталиев, Ильгар. *Азербайджанская ССР в экспансионистских в планах армян (20-е годы XX века)*, Баку, 2010.
13. Скачко А., «Армения и Турция на предстоящей конференции», *Жизнь национальностей*, 4 марта, 1921 г.

WORKS CITED

1. Abrahamyan, Hrant, Martnchogh Arcaxy' 1917-2000 [Fighting Artsakh 1917-2000, Yerevan], girq A 1917-1923, Erevan, 2003. (in Armenian)
2. Avagyan, Shahen, Ler'nayin Gharabagh, iravakan aspektner [Nagorno-Karabakh, Legal Aspects, Yerevan], Erevan, 2010. (in Armenian)
3. Harut'yunyan, Hamlet, Ler'nayin Gharabaghy' 1918-1921t't'. [Nagorno-Karabakh in 1918-1921, Yerevan], Erevan, 1997. (in Armenian)
4. Komunist [Communist], 7 dektemberi, 1920t'. (in Armenian)
5. Simonyan, Hrachik, T'urq-haykakan haraberut'yunneri patmut'yunic [From the History of Turkish-Armenian Relations, Yerevan], Erevan, 1991. (in Armenian)
6. Gasanly, Dzhamil', Nagornyj Karabah: Starye zabluzhdenija v novoj interpretacii. Kavkaz Globalizacija [Nagorno-Karabakh: Old Misconceptions Reinterpreted], Tom 5, Vypusk 3-4, 2011. (in Russian)
7. Ismailov, Jel'dar, Ocherki po istorii Azerbajdzhana [Essays on the History of Azerbaijan, Baku], Baku, 2010. (in Russian)
8. Kocharli, Tofik, K istorii karabahskogo voprosa, (vymysly i dejstvitel'nost') [On the History of the Karabakh Question, (Fictions and Reality), Baku], Baku, 2009.(in Russian)
9. Mustafa-zade, Rahman, Dve respubliki. Azerbajdzhano-rossijskie otnoshenija v 1918-1922 gg [Two Republics. Azerbaijani-Russian relations in 1918-1922, Moscow], Moskva, 2006. (in Russian)
10. Nagornyj Karabah. Istoricheskaja spravka [Historical Background, Yerevan], Erevan, 1988. (in Russian)
11. Nagornyj Karabah v 1918-1923 gg.: Sbornik dokumentov i materialov/ pod red. V. A. Mikaeljana [Nagorno-Karabakh in 1918-1923., Collection of Documents and Materials/edited by V. A. Mikayelyan, Yerevan], Erevan, 1992. (in Russian)
12. Niftaliev, Il'gar, Azerbajdzhanskaja SSR jekspansionistskih planah armjan (20-e gody HH veka) [Azerbaijan SSR in the expansionist plans of Armenians (20s of the twentieth century), Baku], Baku, 2010. (in Russian)
13. Skachko A., Armenija i Turcija na predstojashhej konferencii, Zhizn' nacional'nostej [Armenia and Turkey at the Forthcoming Conference", Life of Nationalities], 4 marta, 1921 g. (in Russian)

THE ANNEXATION OF NAGORNY KARABAKH TO AZERBAIJAN: THE ISSUE WITHIN THE CONTEXT OF DISTORTIONS OF AZERBAIJANI HISTORIOGRAPHY

ARMINE KHACHATRYAN
Yerevan State University, Institute of Armenian studies,
Researcher, Ph.D. in History, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to present the infamous decision of the Caucasian Bureau (Kovburo) of the Communist Party of Russia (CP/b/P) of July 5, 1921 on the entry of Nagorno-Karabakh into Azerbaijan and to show the illegality of this decision by investigating the facts.

The study was conducted with the following objectives: 1. to show the strategy of Soviet Azerbaijan, which adopted and continued the occupation policy of Musavatist Azerbaijan with regard to Nagorno-Karabakh; 2. to reveal the diplomatic steps of Soviet Azerbaijan for the gradual annexation of Nagorno-Karabakh; 3. to present the decisions

of the government of Soviet Armenia to annex Nagorno-Karabakh to the Armenian state; 4. to decipher Narimanov's policy as an attempt to take advantage of the coincidence of interests of Soviet Russia and Turkey; 5. to reveal the reasons for the deviation from the pro-Armenian decision of the Kavburo of the RK/ B/K of July 4, 6. to consider the fact of annexation of Nagorno-Karabakh to Azerbaijan in the context of distortions of Azerbaijani historiography.

The research was carried out by the comprehensive study of primary sources, comparison of historical points of view, and historiographical method. The main focus of the research is the study of the annexation of Nagorno Karabakh in the context of the distortions of Azerbaijani historiography.

The following conclusions were drawn during the research: 1. Soviet Azerbaijan adopted the pan-Turkism policy pursued by Turkey, one of the cornerstones of which was the annexation of Nagorno Karabakh, 2. The annexation of Nagorno-Karabakh to Azerbaijan took place as a result of the convergence of the interests of Soviet Russia and Soviet Azerbaijan, the main artery of which was the far-reaching goals pursued by Kemal Turkey in the region, 3. Azerbaijani historiography expresses contradictory points of view regarding the issue to be examined, makes open distortion of historical facts, one-sided examination of the problem, 4. Counter-arguments against the falsifications of Azerbaijani historiography were put forward.

Keywords: *Nagorno Karabakh, annexation, illegal, decision, historiography, distortion, Soviet Russia, Kavbiuro.*

АННЕКСИЯ НАГОРНОГО КАРАБАХА АЗЕРБАЙДЖАНОМ: ПРОБЛЕМА НА ФОНЕ ИСКАЖЕНИЙ В АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ НАУКЕ

АРМИНЕ ХАЧАТРЯН
научный работник института арменоведческих исследований Ереванского государственного университета, кандидат исторических наук, доцент г. Ереван, Республика Армении

Цель статьи – представить события 5 июля 1921 г., т. е. печально известное решение Кавказского бюро (Ковбюро) Коммунистической партии России (КК/б/К) о включении Нагорного Карабаха в состав Азербайджана, и доказать незаконность этого решения путем изучения фактов.

Исследование проводилось на основе следующих задач: 1. показать стратегию Советского Азербайджана, принявшего и продолжившего агрессивную политику мусульманского Азербайджана в отношении Нагорного Карабаха; 2. Раскрыть дипломатические шаги Советского Азербайджана, направленные на постепенную аннексию Нагорного Карабаха; 3. Изложить решения правительства Советской Армении о присоединении Нагорного Карабаха к армянскому государству; 4. Раскрыть содержание политики Нариманова, направленной на использование пересекающихся интересов Советской России и Турции для достижения собственных целей с помощью тактики угроз; 5. Раскрыть причины отступления от проармянского решения Ковбюро РК/б/К от 4 июля; 6. Рассмотреть факт присоединения Нагорного Карабаха к Азербайджану в контексте искажений в азербайджанской историографии.

Исследование проводилось путем комплексного изучения первоисточников, сопоставления исторических точек зрения, историографического метода. Основное внимание в исследовании уделяется изучению аннексии Нагорного Карабаха в контексте искажений в азербайджанской историографии.

В ходе исследования были сделаны следующие выводы: 1. Советский Азербайджан принял проводимую Турцией политику пантюркизма, одним из краеугольных камней которой была аннексия Нагорного Карабаха; 2. Присоединение Нагорного Карабаха к Азербайджану произошло в результате сближения интересов Советской России и Советского Азербайджана, магистральной линией политики которого была реализация в регионе дальнейших целей кемальской Турции; 3. В азербайджанской историографии высказываются противоречивые точки зрения по рассматриваемому вопросу и допускаются открытое искажение исторических фактов и одностороннее рассмотрение проблемы. Нами выдвинуты контраргументы против фальсификаций со стороны азербайджанской историографии.

Ключевые слова: *Нагорный Карабах, аннексия, незаконность, решение, историография, искажение, Советская Россия, Ковбюро*.